«ԵՐԵՎԱՆ» ԿԱՅԱՐԱՆԻՑ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆ...

...Սեպտեմբերի 27-ին Նորաշեն ենք ուղարկել ժողովրդատնտեսական բեռներով բեռնավորված մեկ գնացք, այնտեղից ոչ մի վագոն չենք ստացել:

...Սեպտեմբերի 28-ին ուղարկել ենք երկու գնացք, ստացել՝ մեկը:

...Սեպտեմբերի 29-ին ուղարկել ենք երկու գնացք՝ ստացել մեկը:

...Սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին ուղարկել ենք զերո և ստացել զերո գնացքներ:

Երևույթը գնահատում և մեկնաբանում է «Երևան» կայարանի կուսբյուրոյի քարտուղար Ն. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ.

— Որպեսզի պարզ լինի, թե ինչքան քիչ են ուղարկվածն ու ստացվածը, ասեմ, որ ըստ նորմայի, ամեն օր Ադրբեջանի կողմից պետք է ստանանք և այդ ուղղությամբ ուղարկենք միջին հաշվով 14-ական գնացք: Վերջին օրերի վիճակագրությունն ուղղակիորեն ժխտում է «վերևներից» հընչած այն հավաստիացումը, թե երկաթգծի շրջափակումը վերացված է: Ո՛չ, չի վերացված, այլ շարունակվում է, այն էլ՝ նոր որակով: Մեր դիսպետչերները, ղեկավարները ինչքան փորձում են կապվել ադրբեջանական կողմի հետ, բանակցություններ վարել գնացքներ ընդունելու և ուղարկելու շուրջ, չի ստացվում: Պարզապես մյուս կողմից մեզ չեն ուզում լսել: Ահա այսօր էլ մեր կայարանում կանգնած է բեռնավորված, ուղարկման պատրաստ 4 գնացք: Դրա բազմապատիկ չափով գնացքներ գտնվում են Ադրբեջանին սահմանամերձ «Երասխ» կայարանում, ավելի քան 200 բեռնավորված վագոններ՝ երևանյան ձեռնարկությունների մերձատար ուղիներում: Դրանց պարունակությանը՝ ժողովրդատնտեսական ամենատարբեր ապրանքներին, սպասում են երկրի տարբեր ծայրերում: Ցավով ու մտահոգությամբ մենք էլ ենք սպասում: Սպասում ենք, որ Նորաշենից վերջապես երկաթգիծը բացելու մասին ազդանշան կտան (դրա համար մեր լոկոմոտիվներն ու մեքենավարները միշտ պատրաստ կանգնած են) ու կկարողանանք երկրին այնքան անհրաժեշտ բեռները ուղարկել, մեր ստանալիքը, որ խցանվել է հարևան հանրապետության ուղիներում, ստանալ, բայց...

Անկեղծ ասած, այս սպասումն էլ անիմաստ բան է դարձել: Ավելի քան մեկ ամիս սպասել ենք, դիմել, բողոքել: Եվ ահա սեպտեմբերի վերջին օրերին վերջապես երկու գնացք է մուտք գործել «Երևան» կայարան: Բայց ինչպիսի՞ վիճակում: Նախ՝ ոչ մի վագոն վառելանյութ ու պարենամթերք, որոնց կարիքը հատկապե՛ս է զգացվում: Բացի այդ, վագոնները բացված են, պարունակությունը՝ փչացած, թալանված: Միայն այդ երկու գնացքների առիթով առնտրական 6 ակտ է կազմված: Ի՞նչ երաշխիք կա, որ մյուսներն էլ, եթե տեղ հասնեն, այդ վիճակում չեն լինելու, այդ բախտին չի արժանանալու նաև մեր ուղարկածը: Ժամանակն է, որ «վերևներում, վերջապես, դատարկ հավաստիացումների փոխարեն, երևույթները կոչեն իրենց անունով, համապատասխան գնահատական տան, մեղավորներին ամենայն խստությամբ պատժեն, նաև միջոցներ ձեռնարկեն, որ ոչ միայն շրջափակումը վերացվի, այլև երկաթուղում, այստեղ լինի, թե այլ ռեգիոնում, այլևս այդպիսի բան չկրկնվի: